ՀՏԴ 373.1

ՆԱՐԻԱ ՍԱՖԱՐՅԱՆ
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Համառոտագիր

Դպրոցը բարդ սոցիալական համակարգ է, որն ակտիվորեն համագործակցում է իր սոցիալական շրջապատի հետ: Դպրոցի կապը շրջապատի հետ երկկողմանի է: Որպես առանձին կրթական հաստատություն՝ դպրոցը մտնում է ավելի լայն կրթական համակարգի մեջ, ինչպիսին են համայնքային, մարզային և հանրապետական կրթական համակարգերը: Դպրոցը, լինելով նախադպրոցական ու բարձրագույն կրթական համակարգերը կապող հիմնարար օղակ, անձի սոցիալականացման, հասարակական էակ դառնալու և համապատասխան արժեհամակարգ ձևավորելու այն միջավայրն է, որն անհրաժեշտաբար ենթադրում է ժամանակին համահունչ կառավարման համակարգի առկայություն ու գործունեություն:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *ավագ դպրոց, կառավարում, դեռահասի սոցիալականացում, ներդպրոցական կառավարում, եռաստիճան մոդել:*

Դպրոցի կառավարման հոգեբանամանկավարժական հետազոտությունն ու վերլուծությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հասարակագիտական տարբեր գիտությունների արդի հիմնահարցերի ձևակերպման ու զարգացումների համար: Դպրոցի կառավարման եզրույթը հոգեբանամանկավարժական գիտակարգի հիմնական բաղկացուցիչներից է: Այն, ներառված լինելով մանկավարժական համակարգերի կառավարման ընդհանուր ոլորտում, մեծ արժեք է ներկայացնում ոլորտի ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական, հոգեբանամանկավարժական, տարիքային հոգեբանության, էթնոհոգեբանության և այլ հոգենաբանագիտական ուղղությունների զարգացման համար [6, 304]:

Դպրոցի՝ որպես անձի կայացման կարևորագույն հենասյուն, բնութագրումը առավել հատկանշական է դառնում ավագ դպրոցի շրջանակներում, որը մասնակցում է դեռահասների սոցիալականացմանը և, լինելով հանրակրթության վերջին աստիճան, իր կենսագործունեությամբ արտահայտում է դեռահասության առկա խնդիրների, սպասումների և նպատակների խտացված պատկերը:

Հանրակրթության կենսագործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Հանարկրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքներով և ոլորտին առնչվող բազմաթիվ այլ իրավական ակտերով:

Հանրակրթության կենսագործունեության գրավականը հաստատության կառավարման պատշաճ կազմակերպումն է: Տարբերակում են դպրոցի կառավարման ներքին և արտաքին փոխկապակցված տեսակներ:

Ներդպրոցական կառավարումը կամ դպրոցի ներքին կառավարումը դիտարկվում է որպես ինքնավարության տարատեսակ, քանի որ ժամանակակից դպրոցը ինքնուրույն է և ինքնակառավարվող: Սակայն դպրոցի ինքնուրույնությունը ամենևին չի ենթադրում սոցիալական շրջապատից անկախ գործունեություն: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ ուսումնական հաստատությունը կառավարվում է միանձնյա ղեկավարման և ինքնավարության սկզբունքների զուգորդմամբ [2, հոդվ.40/3]:

Դպրոցի կառավարումը կամ ներդպրոցական կառավարումը դպրոցի կենսագործունեության և զարգացման հիմնական ուղենիշն է, որի ներկա գործառույթները նախանշում և ապահովում են ուսումնական հաստատության ռազմավարության ուղղությունները ապագայում [4]: Ներդպրոցական կառավարման գործընթացի բնութագրերի և դպրոցի կառավարվող ենթահամակարգի առանձնահատկությունների կանոնակարգումն ու գործառնությունը կազմում են դպրոցի կառավարման ընդհանուր առարկան [8, 429]: Այս իմաստով ավագ դպրոցի կառավարման ընդհանուր առարկան առանձնանում է իր էությամբ: Այն կարելի է դիտել ոչ միայն որպես ներդպրոցական կառավարման բնութագրի կանոնակարգում, այլև որպես հանրակրթության և բարձրագույն կրթության կազմակերպման կապող օղակ ու վերջինիս գործառնության նախապատրաստական փուլ: Այս ընդհանուր տեսական դրույթը բաղկացած է որոշակի մասնավոր դրույթներից, որոնք արտահայտում են ավագ դպրոցի ներդպրոցական ընթացիկ կառավարման առանձնահատկությունները: Դրանցից են՝ ուսումնական գործընթացի կազմակերպումը, կադրային քաղաքականությունը, դաստիարակչական միջոցառումների կազմակերպումը և դպրոց-սոցիում ներդաշնակ կապի ապահովումը: Այս առանձնահատկությունների բացահայտումն ու դասակարգումը պահանջում է կառավարման բազմակողմանի հետազոտությունների իրականացում:

Ժամանակակից առաջադեմ հասարակություններում, ինչպես վերը նշվեց, մշակվել են մանկավարժական համակարգերի այնպիսի սկզբունքներ, որոնք ընդհանուր են ժողովրդավարական հասարակարգերի համար և արտահայտում են ժամանակակից քաղաքակրթության ամենաառաջավոր ու մարդասիրական հիմնարար գաղափարները և կառավարման օրինաչափությունները [7, 701]: Դրանցից են՝ կառավարման ժողովրդավարացումը, համակարգվածությունը կամ ամբողջականությունը, իրականացվող ծրագրերի համադասման սկզբունքը, կենտրոնացվածության և ապակենտրոնացվածության ռացիոնալ համադրումը, միանձնյա կառավարման ու կոլեգիալության համադրումը և տրամադրվող տեղեկատվության օբյեկտիվությունն ու լիարժեքությունը: Այս սկզբունքներն արտահայտում են հիմնակրթության, այդ թվում՝ ավագ

դպրոցի կառավարման հոգեբնանամանկավարժական մոտեցումները և հիմնակրթության յուրաքանչյուր ենթափուլի դեպքում (տարրական դպրոց, միջին դպրոց, ավագ դպրոց) ստանում ուրույն մեկնաբանություն ու շեշտադրում:

Հանրակրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքի պահպանումը նշվում է հանրակրթության պետական քաղաքականության սկզբունքների շարքում և ամրակայված է «Հանրակրթության մասին» օրենքի հոդված 5-ում [3, հոդվ. 5]: Կառավարման ժողովրդավարացման սկզբունքը հոգեբանամանկավարժական գիտակարգի հիմնարար տեսական գաղափարներից է, որն ենթադրում է կրթական գործընթացում ներառված տարբեր կողմերի (տնօրինություն, ուսուցչական աշխատակազմ, սովորողներ, համայնք) փոխգործողության կազմակերպումն ու խթանումը, սուբյեկտ–օբյեկտ փոխհարաբերությունների վերածումը սուբյեկտ–սուբյեկտ փոխգործողության, դպրոցի տնօրինության ընտրելիության, ուսուցչական կազմի մրցութային հիմունքներով համալրման և սովորողների առաջադիմության գրանցման թափանցիկության մեխանիզմների կիրառումը: Դպրոցի կառավարման ժողովրդավարացման սկզբունքի միջոցով սերտանում է դպրոց–սոցիում փոխհամագործակցությունը, դպրոցի կառավարման վերաբերյալ տեղեկատվությունը դառնում է մատչելի ու հրապարակային, իսկ համայնքի ներկայացուցիչները կարող են մասնակից լինել ոչ միայն դպրոցի ներկայացուցչական միջոցառումներին կամ դպրոցին աջակցման տարատեսակ ծրագրերին, այլև դպրոցի խնդիրները քննարկող նիստերին ու ժողովներին: Այսպիսով՝ ժողովրդավարական կառավարման հիմնարար սկզբունքի համակազմում առանձնացվում են հրապարակայնության ու թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները: Դպրոցի ժողովրդավարացման աստիճանը պարզելու նպատակով հարկ է պարբերաբար անցկացնել համապատասխան մոնիթորինգներ, հրապարակել դպրոցի խորհրդի պարբերական հաշվետվություններ, կիրառել բաց դռների օրերի մեխանիզմը և դրանով նպաստել ղեկավար–ուսուցիչ-սովորող–ծնող կապի առավել արդյունավետ փոխգործողությանը:

Դպրոցի կառավարման համակարգվածության կամ ամբողջականության սկզբունքը բխում է նախորդ սկզբունքի գաղափարային մոտեցումից և նպատակ ունի ուղղելու դպրոցի գործունեությունը ավելի արդյունավետ մեխանիզմների մշակման ուղղությամբ: Դպրոցի կառավարման համակարգված, բոլոր ստորադաս համակարգերի միասնական դիտարկումը թույլ է տալիս վարելու կառավարման ամբողջական քաղաքականություն, որտեղ չեն գերադասվում առանձին առարկայական կամ խմբային հետաքրքրությունները, այլ դրանք դիտարկվում են մեկ միասնական համակարգի համատեքստում և գործում են՝ միմյանցով փոխպայմանավորված: Համակարգվածության անհրաժեշտությունը ամենևին չի ենթադրում թողտվության առկայություն: Ընդհակառակն, դպրոցը որպես մեկ համակարգ դիտելու միտումը ենթադրում է, նախ, այդ համակարգի տարբեր ենթահամակարգերի տարանջատումը և նրանց գործառույթների հստակ

բնութագրումը: Այդ ճանապարհով միայն կարելի է հասնել ենթահամակարգերի միջև արդյունավետ փոխգործողության ու փոխօգնության արդյունքին: Նման ենթահամակարգեր կարելի է համարել դպրոցի տնօրինությունը, ուսուցչական կազմը, աշակերտական, ծնողական և համայնքային խմբերը, որոնք, իրենց հերթին, նույնպես տարանջատվում են սեռատարիքային, մասնագիտական, սոցիալական և այլ կարգավիճակներով: Ուստի, դպրոցի կառավարման համակարգվածությունը կամ ամբողջականությունը անհրաժեշտորեն կախված է այդ բարդ համակարգի մեջ ընդգրկված ստորադաս բաղադրիչների՝ ենթահամակարգերի, գործառույթների ճիշտ բնութագրումից և նրանց նկատմամբ ճկուն կառավարման մոտեցումից:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է ներկայացնել դպրոցի կառավարման սկզբունքները՝ ըստ որոշակի բնութագրիչների: Մեր կողմից առանձնացվում են բնութագրիչների հետևյալ խմբերը. դպրոցի ներքին և արտաքին միջավայրերի կառավարման սկզբունքներ, ուսումնական և արտաուսումնական գործընթացի կառավարման սկզբունքներ, կրթական ու վարչական գործընթացների կառավարման սկզբունքներ:

Դպրոցի ներքին և արտաքին միջավայրերի կառավարման սկզբունքի հիման վրա բացահայտվում են ղեկավար–ուսուցիչ–սովորող–ծնող–համայնք-հասարակություն բազմաշերտ փոխհարաբերությունները, որոնք հարուստ են սոցիալ-հոգեբանական և մանկավարժական բազմաթիվ հարցադրումներով ու մոտեցումներով: Այդ սկզբունքի բացահայտման շնորհիվ նկարագրվում են ինչպես ներդպրոցական հոգեբանամանկավարժական կապերը, այնպես էլ՝ տարածվում դպրոց – հասարակություն բազմաշերտ հարաբերությունների վրա [5, 239]:

Ուսումնական և արտաուսումնական գործընթացի կառավարման սկզբունքի հիման վրա կառուցվում է դպրոցի ռազմավարությունը, որոշվում է ավագ դպրոցի ուղղվածությունն ու մասնագիտացումը, մոտակա և հեռակա նպատակները և կապ է հաստատվում ուսումնադաստիարակչական և արտաուսումնական գործընթացների միջև:

Կրթական ու վարչական գործընթացների կառավարման սկզբունքը ամբողջացնում է բնութագրիչների նախորդ երկու խմբերի մոտեցումները, քանի որ ենթադրում է ներդպրոցական վարչական կառույցի կառավարման միջոցով կրթական միջավայրի կազմակերպումն ու գործունեությունը, առանց որի հնարավոր չէ պատկերացնել որևէ դպրոցական համակարգի գոյությունը:

Հավելենք, որ դպրոցի կառավարման վերոնշյալ սզբունքների բնութագրիչների երեք տեսական խմբերը ներառում են ինչպես թվարկած ժողովրդավարության, համակարգվածության, կոլեգիալ և միանձնյա կառավարման ու ծրագրերի համադասման սկզբունքները, այնպես էլ՝ սոցիալական արդյունավետ կառավարման բոլոր ածանցյալ սկզբունքները, որոնք նպաստում են դպրոցի կենսագործունեությանն ու զարգացմանը:

Այդ սկզբունքների հիման վրա ձևավորվում են ներդպրոցական կառավարման հիմնական գործառույթները:

Այսպիսով՝ կառավարման վերոնշյալ առանձնահատկությունները ու սկզբունքները արտահայտում են ավագ դպրոցի կառավարման էությունը՝ որպես մի եռաստիճան մոդել: Ինչպես երևաց, ավագ դպրոցի կառավարման հիմնական սկզբունքները դիտվում են նախ՝ սոցիալական կառավարման ընդհանուր գործընթացի ներքո, ապա՝ դպրոցի կառավարման գործընթացի և վերջապես՝ ավագ դպրոցի կառավարման գործընթացի ներքո:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիր,- Հավելված 1 ՀՀ կառավարության 2008 թ. Թիվ 12 որոշման
2. ՀՀ օրենք «Կրթության մասին»
3. ՀՀ օրենք «Հանրակրթության մասին»
4. Ռազմավարական ծրագիր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի և հիմնական դպրոցի զարգացման, 2014-2018
5. **Горюнова Л. В**. Овладение знаниями и умениями педагогического менеджмента как фактор повышения качества профессиональной подготовки учителя: дис. ... канд. пед. наук. Ростов н/Д, 1999. 239 с.
6. **Крыжко В. В., Павлютенков Е. М**. Психология в практике менеджера образования. СПб., 2001. 304 с.
7. **Мескон М. Х., Альберт М., Хедоури Ф**. Основы менеджмента: пер. с англ. М.: Дело, 1993. 701 с.
8. **Симонов В. П.** Педагогический менеджмент: ноу-хау в управлении педагогическими системами: учеб. пособие. М.: Пед. общество России, 1999. 429 с.

НАИРА САФАРЯН

кандидат педагогических наук, доцент

ПРИНЦИПЫ УПРАВЛЕНИЯ СТАРШЕЙ ШКОЛОЙ

Работа посвящена принципам управления старшей школой. Школьное или внешкольное управление является основным ориентиром активной деятельности и развития школы. Представлены прицип управления школой в соответствии с определенными характеристиками. С нашей стороны отмечены следующие группы характеристик: принципы школьного и внешкольного управления старшей школы, принципы учебного и внеучебного управления школой.

NAIRA SAFARYAN

PhD in Pedagogy, Associate Professor

MANAGEMENT PRINCIPLES OF HIGH SCHOOL

The work is dedicated to high school management principles. The basic marker of school and out of school management is its activity and development The principles of

school management are presented in accordance with certain characteristics. On our part, the following groups of characteristics were noted: principles of the school and out-of-school management of the high school, principles of educational and out-of-school management of the school.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 29.08.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 06.09.2019թ., ընդունվել է տպագրության 20.09.2019թ.: